

ՄԱՆՔ
Տարեկան գին և Պոլսոյ հոգ 8 ՄԷՃ.
՝ Գաւառաց 10 ՄԷՃ.
Վեցամսեայ և Պոլսոյ 4 ՄԷՃ.
՝ Գաւառաց 3 ՄԷՃ.
Գլխաւոր թերթի գին 60 փր.
Հանձնարար տողը մէկ անգամի հա-
ւար 3 զուրուշ, երկու անգամի հա-
ւար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կրկայ:



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ 17 ՕԳՈՍՏՈՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պրիւսիոյ դեսպանախորհուրդը չէ կրցաւ իրեն յանձնուած դաշնագ-
րութեան ծրագրին համեմատ իր
պաշտօնը դուռն հանել. որովհետեւ
տեղութիւններէն շատերը չուզեցին
ընդունել այն ծրագրին գլխաւոր բը-
րամագրութիւնը, որ պատերազմը մի
միայն զօրաբանակաց մէջ սահմանա-
ւորել կուզէր:

Կերտի որ այս ծրագիրը Գերմա-
նացիք երկնած էին՝ 1870ի Գաղղի-
ական պատերազմէն խրատուելով:

Ինչպէս որ կը յիշեն ընթերցողք,
Գաղղիա՝ պատերազմին սկիզբէն իր
կանոնաւոր բանակները կորսնցնելով
անգոր և անզին մնացած էր. բայց
և այնպէս քաղաքացի և զեղացի
ժողովուրդներն հայրենասիրաբար
սարք ելնելով թշնամույն յառաջխա-
ղացութիւնն արգելելու փորձերը
ընէին: Գերմանացիք ալ անխնայ ջա-
րեցին զանոնք, որպէս զի մնացեալ
ժողովուրդները վախճալով, մի և նոյն
փորձերն անոնք ալ չընեն և դիմադ-
րութեան հոգին չընդհանրանայ:

Առաջարկեալ դաշնագրութիւնը
կուզէր ընդհանուր օրէնք մը դնել,
որ պատերազմի ժամանակ միայն զօ-
րականները պատերազմին, և քաղա-
քացի ու զեղացի ժողովուրդք բնաւ
կուռն չխառնուին: Ասոր հետեւնքն
ուրիշ բան չէր կրնար ըլլալ. բայց միայն
թող ալ յաղթողին որ դիմացը բնաւ
կուռն չգտնելով առանց արգելքի
յառաջ քալէ և դիւրութեամբ աշ-
խարհագրութիւն ընէ իր պարտեալ
թշնամույն երկրին մէջ: Իսկ ժողո-
ւորդն իր հայրենասիրական եռանդ-
ով լռեցնելով, ոտը չընէ, զէնք
չառնու, դարան չլարէ, թշնամույն
յետամնաց զօրականները դերել չը
բռնէ կամ չսպաննէ, թուփերու և
անտառներու մէջէն յանկարծ հրազէն
չսարսփէ թշնամույն վրայ, կիրճերն
ու անցքերը չբռնէ, անտառի տեղե-
րը չամրացնէ, այլ բոլորովն ինքզինք
չհզօք նկատէ օտարին և իր հայրե-
նակցաց մէջ, և հանդիստ ու անհոգ-
ի տեղը նստելով հեռուէն հանդի-
սատես ըլլայ իր հայրենեաց դերու-
թեանը:

Անգղիոյ և Գաղղիոյ զօրութեանց
վերջին անգամ ջիւղաց կայսեր զօր-
քերտն հետ պատերազմած ժամա-
նակ, Չինաստանի դիւղօրէից ժողո-
ւորդները խումբ խումբ պատերազ-
մի դաշտերը կը գլխէին և իւրօրոյն
կան թնդանօթներուն իրենց հայրե-
նակից զօրաց մէջ ըրած կտորածն
հանդարտութեամբ կը գլխէին: Ա-
ռաջարկեալ ծրագրին այս դերը կա-

տարեւ տալ կուզէր եւրոպացի ժողո-
ւորաց, բայց չընդունուեցաւ:

Գաղղիոյ լրագրքը կը շարունա-
կեն Պաղէնի փախստեան խնդրովն
զբաղել, և հետզհետեւ առաւել դըր-
դըութեամբ կը խօսին կառավարու-
թեան դէմ, պատասխանատուութիւ-
նն անոր վրայ ծանրացնելով:

Տէսլա լրագիրը, որ ամենէն լուրջ
և ծանրաբարոյ լրագիրը կը համար-
ուի, և մինչև հիմա կառավարութիւ-
նը կը պաշտպանէր, այս դէպքին
առթիւ հետեւեալ խօսքերը կըսէ.

«Կառավարութիւնն արգարու-
թեան կողմէ իրեն յանձնուած բան-
տարկեալները պահելու մասին շատ
անհարակ է: Այս տեսակ դէպքեր,
երբոր յաճախ պատահին, վարչու-
թեան աշարջութեամբ վրայ խիստ
տիրուր գաղափար մը կուտան: Եթէ
մէկ անգամ ըլլար, չիտօսէինք. բայց
երկու եղաւ. Ռօշֆօրէն ետեւ Պաղէն,
ստուգել չկրնար մարտիլ. այս-
չափ ձախողութիւն բնական չկրնար
ըլլալ: Ներուր մեզ ըսել, մեքենա-
յին մէջ պակասութիւն մը կայ: Այս-
պիսի ձախողութիւններ իրարու վը-
րայ չեն գար տառնց պատճառ տըր-
ուելու: Յայտնի կը տեսնուի, — և
այս է որ երկուգոյն կերպարանք մը
կուտայ Պաղէնի փախստեան, — որ
կառավարութեան վրայ տեսակ մը
թալուկ կայ, որ անոր ամեն անդա-
մայ մէջ ճարակած է: Ընդհանուր տը-
կարութիւն մ'է այս, յորմէ բան մը
ազատ չէ, որ մինչև հեռուները կը
տարածի, և որ հաւատարմագէտ զգա-
լի է նոր փախտանիք կղզիներուն և
Սէնթ-Մարկիթի մէջ:

«Այստեղ խիստ ծանր է. թերեւ
լաւ է ամենուն աչքին դարձնել, որ-
պէս զի դարմանը փնտռուի ու դուր-
ժագրի: Այս ակամա էր որ եւրոպե-
կայսրութեան վերջերն ամեն բան
կազմալուծեր էր Գաղղիոյ մէջ:»

Մարտիկայի Մէմֆօռ լրագիրը
Պաղէն մարտախոր փախստեան շուր-
նակն ուղեորութեան պարագանե-
րուն վրայ հետեւեալ տեղեկութիւն-
ները կուտայ.

«Օգոստոս ամսոյն առաջին շաբ-
թուն մէջ երկու հոգի, պարոն մ' և
տիկին մը, որոց մին ինքզինք դուքս
կուլել կուտար և տիկինն ալ իբրեւ
իւր կինը կը ներկայացնէր, ձէնու-
վայի Բէյրութի Տանօվարօ և Բէյի դը-
րառներեակը գնացին և Մարտիկայի
կողմն զօրական ուղեորութիւն մը
ընելու և քանի մը նաւահանգիստ
հանդիպելու համար շոգենաւ մը
վարձել ուղեցին: Սակարկութեան
մասնով օրը 1000 Փրանքի պարոն
Բիքազօրի անուն շոգենաւը վարձեցին
վեց աւուր համար:

«Օգոստոս 8ին յիշեալ շոգենաւը

Չէքքի նաւապետին հրամանաւորու-
թեամբ ձէնովայէն կը մեկնի կար-
ճեցեալ դուքսն ու դուքսին մէջը,
և անոնց հրամանին համեմատ Բօր-
թօ—Մօրիթի կերթայ: Հոն դուքսն
ու դուքսին ցամաք ելնելով քաղա-
քը կը պարտին, և քանի մը ժամ
ետը շոգենաւը դառնալով կը խընդ-
բեն նաւապետէն որ ճանաչու ելնէ և
այս անգամ ճանաչան փոխելով Նաբօ-
լի երթայ, ուր աղագականներ ունին,
կըսէին, և անոնց այցելութիւն մը
տալ կը փափաքէին: Ասիկայ հնարք
մ'էր, որպէս զի իրենց ուղեորու-
թեան բուն նպատակին վրայ կաս-
կած չաղդեն:

«Նաւապետն յայտնեց թէ շոգե-
նաւին տէրերէն ստացած հրահանգը
չէր ներք իրեն Նաբօլի երթալ, ու-
րովհետեւ շատ օր կը կորսնցնէր: Ու-
ղեորներն համազուել կեղծեցին այս
պատճառաբանութեան՝ որ իրենց
նպատակին նպաստաւոր էր, ուստի
որոշեցին Գաղղիոյ փան նաւահան-
գիստն երթալ, ուր ուղեորներն որ-
պէս թէ ամարանոց մ' ունէին և ան-
կէց սպասաւոր մ' և քանի մ' ալ կա-
րասի պիտի առնուին. բայց նախ
կուղէին Սան—Ռէմօ հանգիւղի և
հոն ճաշել:

«Շոգենաւը ճանաչու ելաւ դէպի
Սան—Ռէմօ, ուր առանց դժուարու-
թեան հանկուղի՝ ցամաք ելան ու
ճաշեցին:

«Ճաշէն ետեւ շոգենաւը դարձան
և դէպի փան ճանաչու ելան:

«Երբոր ցամաքին մտայնան, ու-
ղեորներն հոն տեսնուած ամարա-
նոցներուն մէջ իբր թէ իրենց ստաց-
ուածն եղող ամարանոցը հեռուէն
ցոյց տուին նաւապետին:

«Հովն ուժգին կըմբէր: Նաւապե-
տն ըսաւ թէ յուսան ծովածոցը
փանի նաւահանգիստն աւելի ապա-
հով էր երկաթ նետելու համար, մա-
նաւաւոր որ ուղեորներն աւելի մօտ
կը գտնուէին իրենց ամարանոցին:
Հետեւաբար շոգենաւը յուսան ծովա-
ծոցը մտաւ և ուղեորները ցամաք
եկան: Նաւապետն ալ անոնց հըրա-
մանաւ ցամաքն ելաւ, որպէս զի Նիս
երթալու համար պէտք եղած թուղ-
թեան առնու:

«Ուղեորներն իրիկուան ժամն եօ-
թին ու կէսին (12 Ն/2ին) միջոցները
Սէնթ—Մարկիթ կղզոյն դիմացի
Գրօպէթ հրուանդանէն մակույկ մը
բռնելով հաղիւ կըցին կէս ժամէն
գլխաց անցնել:

«Պաղէնի փախտաւոր ժամը տառ-
նին (կէս գիշերէն երկու ժամ առաջ)
միջոցներն եղած է:

«Չէքքի նաւապետը կը պատմէ
թէ կիրակի իրիկուն կէս գիշերին
միջոցներն իր խցիկին մէջնջած մի-
ջոցին զինքն արթնցողին՝ ծանուցա-
նելով թէ դուքսն ու դուքսին շո-

ՊԱՆՈՒՄ
Դուքս գացած լրագրաց ճանրու
ծախքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր
— Տնօրէնին պիտի ուղղուի, և Պօ-
լիս, Չինիլի խան, Մաթիսի գրասեն-
եակը:
Համարու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր:

դենաւը դարձան սպասաւորի մը
հետ, որ ձեռքն երկու պայուսակ
ունէր:

«Նաւապետն հրաման ըրաւ որ ըս-
պասաւորը երկրորդ կարգի ուղեո-
րաց խուցը տանին, նա ալ անմիջա-
պէս հնազանդելով դնաց՝ առանց բը-
նաւ կասկած մը տալու թէ սպասա-
սաւոր չէր: Դուքսն ու դուքսին ալ
առաջին կարգի ուղեորաց խուցը
քաշուեցան:

«Ուղեորները խնդրեցին նաւապե-
տէն որ անմիջապէս ճանաչու ելնէ, բայց
Նիս երթալ չէին ուղեր, որովհետեւ
Գաղղիոյ ջուրերէն շուտով հեռանալ
կուղէին: Ըսին նաւապետին թէ ֆա-
նի մէջ հեռագիր մ' ստացեր էին որ
դուքսին քրոջ ծանրացան հիւան-
դանայը ծանուցանելով Նաբօլի եր-
թալու կ'ստիպէր զիրենք, հետեւա-
բար աղաչեցին որ շուտով ձէնովա
դառնայ, ուր կը յուսային շոգենա-
ւին տէրերուն հետ բանակցել և շո-
գենաւը նորէն վարձել զիրենք Նա-
բօլի տանելու համար, մանաւանդ
քանի որ նաւապետէն ալ խիստ գոհ
էին:

«Այս կեղծ խօսքերէն նաւապետը
համազուելով ձէնովա երթալու հը-
րաման տուաւ: Ուղեորութեան այս
վերջին մասին մէջ սպասաւորը՝ որ
երկրորդ կարգի ուղեորաց կողմը
դրկուած էր, իր տէրերուն հետ բը-
նաւ չէր տեսակցելու իսկ կարծեցեալ
դուքսն ու դուքսին նաւապետին
հետ կը խօսակցէին ընտանեբար, ի-
րենց Նաբօլի երթալու դիտաւորու-
թեան վրայ:

«Շոգենաւն երկուշաբթի իրիկուն
ձէնովա հասաւ: Դուքսն ու դուքս-
ին անմիջապէս նաւապետին հըրա-
ժեշտի ողջոյն տալով ցամաք եկան ի-
րենց սպասաւորին հետ:

«Երեքշաբթի առաւօտ երեք ու-
ուղեորները ձէնովայէն շոգենաւը
նստելով մեկնեցան:

«Դուքսին Պաղէն մարաշխտին
կինն էր, դուքսն անոր Ալվարէզ Ռուշ
եղբորորդին էր, սպասաւորն ալ Պա-
ղէն մարաշխտն էր:»

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 27 օգոստ.

Պալիկայի խաղաւորը մեկնեցաւ աս-
տի: Մար—Մահոն մարաշխտ փարիզ
վերադարձաւ:

Պրիւսիոյ զինուորական դեսպանա-
խորհուրդն այսօր կը փակէ իր նիստերը:

Պէլլիատ 26 օգոստ.

Սերվիոյ իշխանը դէպի սեպտեմբեր
15ին Թօրինօ պիտի երթայ յայցելութիւն
Խալիլի թագաւորին:

Պէլլիոն 26 օգոստ.

Գերմանիոյ կայսեր Խալիլա երթալու
դիտաւորութիւնը կէս պաշտօնական կեր-
պիւ տուաւ կը հանուի:

որ կը վայելէր Հայոց ազգի Պատրիարքի մը, անշուշտ բնագծանուր ծախուց գումարը պիտի հասնէր 50000 զրոյն տակէն: Բայց այսքան գումարէն մենք իրեն իրաւունք չաւանջենք: Բնական 16000 զրոյն հանապարհի ծախքը նշանակելով թողնուի և չը յիշելով ամեն մանրամասն ծախքերը, զորս գրեթէ խոհեմութեան և պատուոյ դէմ կը համարուի:

Երանելի թէ այդ անկողն քաղաքացւոյ հետ եւ ալ ձեռնհաս լինելի այդ հնչելի գումարը գոհել և այսօր չհանել ձեր ատեան այս հաշիւ, բայց անձեռնհաս եմ: Ես յիշող քահանայ զոհեցող իրաւունքներս, ո՛հ, և վստախորհութիւնն այսօր իրեն ինչ... այսօր իրեն անկողն և զօշաքաղ կը դատուիմ յոմանց:

Եթէ այս պահանջին համար յառաջ բերէք և բռնէք թէ՛ այդ պահանջը խիստ աղաժամ է, և թէ Պօլիս մտած ժամանակն ինչպէս չեմ պահանջած զայն կեդր. անտուկէն և այլլին, գոնք պէտք է ընդ այս գոհ լինիք որ իրաւունքներս շատ ուշ կը յիշեմ ու կը պահանջեմ: Այդ վստաք մեր իրաւունքը չժխտեմ: Թէ շուտ թէ անագան իրաւունքը միշտ իրաւունք է: Եթէ առաքելային մը պէս դայի և դուք այնպէս ընդունէիք և ճանաչէիք զին, անպիման Գօթիով կը ճանապարհորդէի: Բայց քանի որ ձեր Պատրիարքն էի, ըստ իրաւունքի աշխարհաւարութեան կարգով վարել: Ուրեմն պէտք է այս պահանջն ևս ճանչնաք և յուսելով մեր ամանականց գումարին հետ:

4680 զրոյն գումար մի ևս այն պահանջն ունիմ, զոր երկու տարի յառաջ վճարած եմ Գեր. Սիմէօն Լեւոնիսիոսին, երբ վարչութեան տընտրեցուցեմ ի կիլիկիա գնաց: Նոյն ժամանակի Գաղ. Ժողովին 400 լիւրայ ճանապարհի ծախս որոշած էր, որուն 40 լիւրան մենք վճարեցինք, յանձնարարելով յերուսաղէմի Գեր. փոխարք. Հօր, որ նա ևս վճարելով անցուցեր է ի հաշիւ արդէն վճարուած մուգաթաներուն:

Այս գումարէն յետոյ փոքրիկ գումար մի ևս պէտք է կցել, այն է Միքայէլ ձեռնհասին վճարած հին պարտք 360 զրոյն, այն հաշուով մեր պահանջին գումարին կը հասնի 501040 զրոյն:

Իսկ եթէ բարեխոհ վարչութիւնդ նախորդ 48 ամեան մեր անխնայ պայծառութեան միջոցին իրեն երթել եկողութեան ծախս վճարած գումարն հաշուել և հանել ուզէ այս գումարէն, ևս ալ տակաւին իրաւունքը անկամ հետադուրէ մեր ընդհանուր հաշուոյ կարգը և յառաջ բերել այն ամէն գումարները, որ առաւել կեդր. անտուկէն կը պատկանին և նորա անհրաժեշտ պարտիքն էր այնպիսի ծախսերը հոգալ, բայց մենք հոգացած ենք:

Վերոգրեալ մեր պահանջին դէմ ստացած գումարս եղեր է կեդր. Սնտուկէն և մուգաթաններէն 457527 զուրուշ:

Այս գումարին վրայ պէտք է հաշուել նաև Պատրիարքարանին մէջ հնուց մնացած ցեցակեր հաշուի մը վրայ բանուած 120 տրեմ արծաթ թիւի զինք 480 զրոյն:

Այդ արծաթները մեզմէ դուրսնի և ինքնադուր հաշիւ տուած էր մատակարարը, զոր արձակեցի պաշտօնէն, և արծաթին որքանութիւնը և արժէքը հարցնելով անոր ամսական վար իշած էի:

Այս հաշուով կը տեսնուի որ մեր պահանջն եղած 501040 զրոյն մեզ հա-

տած ստակի գումարն է 457907 զրոյն, զոր վար իջնարով պահանջէս կեդր. սնտուկը պարտական կը մնայ մեզ 43133 զրոյն:

Ելեմտական խորհուրդի շինած հաշուեցուցակէն դուրս հանած եմ Ս. Մշոյ Ս. Կորսպեանի վանուց մուգաթաններուն հաշիւը, զոր առանձին հաշուեցուցով և բացատրութեամբ գրեցի, իրեն գտաւ խնդիր, և ահա զայն ևս ներգրեցեալ կը մտադրանեմ:

Բ. Բարեբաղու մուգաթան 500 զրոյն, զոր երեմիա եպիսկոպոսն ստացած էր այնքանութեան միջոցին ամսականներուն ի հաշիւ, և ահա տնոր տուած անդորդադիրն ալ ներգրեցեալ կը գրեմ:

Գ. Իսկ Բիւրխայի և Հասան գաղթի մուգաթանները հալածել տուած ըլլալով մինչև այսօր առնուած չեն: Վրան որոյ կեդր. սնտուկէն արկղին կը վերադարձնեմ, որոյ գումարն է 2500 զրոյն:

Դ. Գաղատիոյ 13200 զրոյն մուգաթանի գումարն Տօնէիւն Սեմ. Յակոբ աղային հալածել տուած էի, բայց Պատրիարքութենէ հրաժարելու օրերը տեղաբարեց թէ առած չէր: Ես համար կրեմ որ, երբ վարչութիւնը Գաղատիոյ Ս. Առաք. նորդէն կամ յիշեալ աղայէն ստուգէ թէ վճարուած եղեր է, կընդունեմ արեւմտեան այդ գումարն ալ հաշուել մեր վրայ:

Ահաւորիկ գրեցի հաշիւս, զոր կը մատուցանեմ Բաղաքական Ժողովոյ ատենիդ, աղտելով որ ամենայն ազնուամտութեամբ և իրաւասիրութեամբ ուղղորդութեան առնուք: Ուր պիտի տեսնաք թէ խորհմանը խիստ չափաւորութեամբ և զոհողութեամբ վարուած է այն հաշուական խնդրոյն մէջ:

Եթէ ի հաշիւ և ի համար բերելի այն ամէն ծախուց գումարները, զորս թէ յանուն ազգին և թէ յանուն Պատրիարքութեան և այլն տընտնուած եմ, անապարհկոյ եղիք որ կեդր. սնտուկը շատ պարտական պիտի մնար խորհմանին:

Հաւատացէ՛ք, չորս տարուան միջոց կեդր. սնտուկէն առած թոշակին հետ բաւական գումար մի ևս աւելի ծախսելով դու ձեռք պարտքով և երեք ու կէս շաբաթէն գրպանս ունենալով դուրս ելայ: Այս հաշիւն ևս օր մի պարտական եմ հրապարակ հանել, որպէս զի ինչպէս ցրուին այն ամեն տարապարտ կարծիքները, թէ խորհման ազգին դանձը խորեց, յափշտակեց և այլն:

Նը խնդրեմ ի վերջոյ, որ այն հաշուական խնդրոյն միանգամ վերջ տալու չնորհ ընէք: Իսկ եթէ անբաւական կը դատուի և տակաւին բացատրութիւն պահանջել կուզէք, պարտաւոր եմ ըստ ամենայնի:

Էս եթէ քաղաքական Ժողովոյ ձեռնահասութեանէն դուրս կը համարուիք որքան վերջնական վճիռը տալ ուրեմն հարկ է յայնժամ որ լընդ գրեմ Ընդ. Ժողովոյ ատենը հանէք ըստ օրինի Սահմանադրութեան:

1874 ապրիլ 12 Իսկիւտար

ՄԳՏԵԶ ԵՊԻՍԿՈՍՈՍ ԴԼԱԿԱՍ

ՄԵՐ հաշիւեցոյց կեդր. սնտուկէն Բիւրխայի 48 Գեր. 1869 Նոյ. 1 Կէս 1873

ՀԿԻ. Զեքէ:

ՊԱՐՏԻՄ

1869 Նոյեմ. 15 մինչ 1871 ապրիլ վերջ 18 ամեան միջոց ստացած գումարս 95547

1871 մայիս 15 մինչ 72 ապրիլ վերջ 72 մայիս " " 73 " " 118392

73 մայիս " " 73 հոկտ. " "	58547
	422547
Երեսուցե մի մուգաթան 1872—74	48000
Երեսուցե մի թերհաշիւ 74—75	14000
Կորնոյ մուգաթան 73 74	2500
Գեղարկեր հին Հաշուի արծաթ թիւի բոլոր 420 տրեմ	480
	457527

Պ Ա Հ Ա Ն Զ Ե Մ

1869 Նոյեմ. 15 մինչ 1873 հոկտ. վերջ 18 ամեան 10000 զրոյն	480000
Մուշէն մինչև Պոլիս դարձող ծախս Սիմէոն Եպիսկոպոսին կիլիկիա եր. թաղա ճանապարհի ծախուց մի ևս	4680
Կեդր. սնտուկէն հին պարտուց համար շիջման Սիմէոնին վրձարած	360
	501040

Մշոյ Ս. Կորսպեանի վանուց Գոթի-Ներսէս հաշիւեցոյց ըստ Երեմիայի Բարեբաղու

ՊԱՐՏԻՄ ՎԱՆՔՆ	
1767—68 թերհաշիւ	2300
68—69 ապրիլ	8800
69—70 " "	8800
70—71 " "	8800
71—72 " "	8800
72—73 " "	8800
73—74 " "	8800
	53100

Ասոր դէմ մեր կողմէն կեդր. Սնտուկէն վճարածը հաշուելով,

Կը մնայ	34600
---------	-------

Ըստ Գեր. հաշիւի	
1869—70 ստացած եմ վանքէն	7500
70—71 " " "	7500
71—72 " " "	7500
72—73 " " "	7500
73—74 " " "	7500
	500

Մտաւ Ս. Առաքելոյ փառքն ևս

	38000
--	-------

Կեդր. Սնտուկէն վճարածս վար իջնելով

	20500
--	-------

Պարտական կը մնամ

	17500
--	-------

Բացատրութիւն. — Ինչպէս կը տեսնուի, կեդր. սնտուկէն հաշիւը տարեկան մուգաթան 8800 զրոյն հաշուած է, այն ինչ 7500 զրոյն միայն ճանչցած ու վճարած է մեզ փառքն, որոյ տարբերութիւնը է 692 մինչ 74 տարւոյն 5 տարւոյն 1300 զրոյն 6500 զրոյն իսկ 67 թերհաշիւ 2300 զրոյն և 1868 թ. ապրիլ 8800 գումարը, որ ընդ ամեն կընէ 14400 զրոյն մեր պատրիարքութեան առաջ եղած հաշիւ է: Այս մասին պէտք է փառքն տուածներուն զիմել և փառքն տնօրէն Ժողովոյն հարցում ընել և եթէ վճարուած չէ, փառքն պահանջել:

ՏՄԱՐԴՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿ ՄԵ

Մեծ. Տոքթոր Մորթման արեւելադէտին աշխատասիրութեամբ Արաբայի պատմագրութեան մէջէն քաղուած Հայաստանի պատմութեան հատուածները, զոր մասն առ մասն լրագրոյ մէջ հրատարակած էինք, զատ տեղաւորու ալ տպուելով, մեծ մասը Մեծ. Տոքթոր Մորթմանի հաշուոյն պիտի վաճառուին Հայ դըրաւ վաճառացիքով:

Մեծ. Տոքթոր Մորթման յիշեալ տեղաւորէն օրինակ մ'անցեալ շաբաթ Օրագրոյ խմբագրին կըղերկէ յատուկ նամակաւ մը խնդրելով որ ծանուցանէ իւր թերթին մէջ, բայց Օրագրոյ խմբագիրը մերժելով եւ կըղարձնէ տեղաւորը:

Այս ամարդի գործին մեք ուրիշ պատճառ չենք կրնար գտնել, այլ նախանձու չար ոգին, որովհետեւ այն գործին թարգմանելը մեք եղած

ենք, և տեղաւորին վրայ մեր անուանքն ալ գրուած է:

Անցեալ տարի ալ մեր մէկ թարգմանած գիրքն ըստ սովորութեան զրկեցինք իրեն, և նոյնպէս չճանոցի: Պատճառն հարցունելով պատասխանս ստացանք իրմէ թէ գրած ծանուցումը կորսուելով չէր կրցած հրատարակուիլ: Բայց արդեօք մեր զրկած գիրքն ալ կորսուած էր: . . . դուք գիտեա՞նք մը մէջ:

Զօյլեան հարցունին իր թերթին միջոցաւ կը պնդէ և քանիցս անգամ կը յեղյոյնէ թէ վանքի Պօղոս վարդապետին դատաւանդէն արդիւնք մը չպիտի գոյանայ, այլ միւս դատեալուն պէս այս դատն ալ գնա եկուածով պիտի հիննայ, փառքն, խնդիրը պէտք է դադարի, և այլն և այլն:

Այս խօսքերուն նպատակը կ'աժ հասկնայէ թէ մեր Պատրիարքարանը դատաւանդ տեսնելու և արդարութիւն ընելու անկարող է, կ'աժ անուղղակի հրաւեր կարգաւ է Պօղոս վարդապետին որ իրեն դէմ է իր դատը փոփոխելու և ապարդիւն հանելու միջոցներն իրմէ սովորի:

Անցեալները «Թրիմեան և դործք իւր» մակագրով հրատարակուած խոյս տառակ տեղաւորին մը հեղինակն ու տպագրիչը Ոստիկանութեան կողմէ փնտաւելով, ապագրիչը որ Չամաչըրճեան Պ. Բարութիւնն է եղեր, և անոր հետ քանի մը վանքի օտաւ պաշիններ Ոստիկանութեան դուռը կանուցան չորեքշաբթի և հինգշաբթի օրերը: Կը լսենք թէ այսօր նորէն կանուած են:

ԾԱՆՈԹՅՈՒՄ

Հմուտ եւ փորձ հայկական մը շահ լալը երեք կէս օր պարապ ժամանակ ունենալով, պատրաստ է ազգային վարժարանի մը մէջ հայերէնի: Երամարանութեան եւ հոգեբանութեան դասախօսութիւն ընել:

Ու զորը լրագրոյս խմբագրէն կըրնայ տեղեկութիւն ստանալ:

ՀԱՐԻՐԻՆ 25 ԶԵՂԶ

ՄԻՆԵՐԱՆԵՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՆԵՆ

ՆՈՐԱՄԱՌՈՅՑ

ԱՄԵՐԻԿԱՆ ՎԱՃԱՌԱՏԱՆ ԲԱՅՈՒՆԻԼԸ

Ս. Մ. Մինտեան եւ ընկերը պատիւ կը համարին ծանուցանել արդոյ հրատարակութեան, որ իրենց Ամերիկեան վաճառատները վերադառնալու օրը ցուցելով մօտեւ քաղաքացւոյ, և անոր առթիւ իրենց բոլոր վաճառքները զեղով պիտի ծախուին սկսեալ օգոստ. 8/20էն մինչև 18/30 սեպտեմբեր. ուստի հատարակութիւնը յարգանք կը հրաւիրուի ոյս պատեհութեանէն օգուտ քաղելու:

Կարի գործիք՝ Սոպա եւ երկաթ խողովակներու գինեքէն միայն հարկւրին 10 զեղ պիտի ըլլայ:

Բոլոր միւս վաճառացի գինեքէն հարկւրին 25 զեղ պիտի ըլլայ:

Ամերիկեան վաճառատուն ճամի գաբուսի Ղալթիա 5

Ի Լ Ա Ն

Պիր սէնէ միւստէթատէ լուղումի օրան դէյլին, պէհէր գըլէսի 4 1/2 զրուշ:

Տօն եաղը, գըլէ 8000, պէհէր գըլէսի 8 1/2 զրուշ:

Պալըզ եաղը, գըլէ 11000, պէհէր գըլէսի 7 զրուշ:

Ասաքիւրի Ծահանէ եղաք անպատրւելա Պէյզ օղ տէպաղիւնէսինէ լուս

